ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 25/11/2022

ք. Երևան 25 նոյեմբերի 2022թ.

«Բլիզարդ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս տնօրեն Արմենուհի Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և մյուս կողմից «Առողջապահության նախարարությունը» (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս Վարդանուշ Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Համաձայն սույն պայմանագրի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2 Կատարողը պարտավորվում է պատվիրատուի հանձնարարությամբ 1.3 կետում նշված ժամանակահատվածում կազմակերպել սուրճի և ճաշի ընդմիջման ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն) 200 անձի համար, վայրը՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերություն, հասցե՝ ք. Երևան, Ֆանարջյան փող., 76 շենք:

1.3 Ծառայությունների մատուցման օրը՝ **26.11.2022թ.**

1.4 Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից սույն պայմանագրում նշված ծառայությունների վերաբերյալ կազմված հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

Կատարողը պարտավոր է՝

2.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով:

2.2 Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում:

2.3 Անձամբ մատուցել Ծառայությունները:

2.4 Պատվիրատուի պահանջով անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները.

2.5 Պատվիրատուն պարտավոր է նախատեսված միջոցառման օրվանից հետո 3 աշատանքային օրվա ընթացքում վճարել Կատարողին 3.1 կետով սահմանված գումարը: Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Կատարողին վճարելու վերաբերյալ պարտականությունը համարվում է ամբողջությամբ կատարված՝ սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Կատարողին ամբողջությամբ փոխանցելու և այդ գումարի վճարման վերաբերյալ բանկային հանձնարարականը Կատարողին ներկայացնելու պահից:

2.7 Պատվիրատուն իրավունք ունի՝

Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը, մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1 Պատվիրատուի կողմից 1,3 կետում նշված ժամանակահատվացում Կատարողին վճարվելիք ընդհանուր Ծառայությունների գումարը կազմում է **2,494,200.0** (երկու միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

3.2 Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի 0.5 տոկոսի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.05 տոկոսի չափով:

4.2 Տույժի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

4.3 Սույն պայմանագրի 2.6 կետում նշված Ծառայությունների վճարման ժամկետը խախտելու համար Պատվիրատուն Կատարողին վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի 0.5 տոկոսի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.05 տոկոսի չափով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չեն կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրի պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ փոխադարձ համաձայնությամբ: Փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.2 Սույն պայմանագրի անբաժանելի մասերն են հանդիսանում կողմերի միջև կազմվելիք ծառայությունների վճարովի մատուցման աշխատանքների հանձնման-ընդունման ակտը, սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գումարի վճարման վերաբերյալ բանկային հանձնարարագիրը:

7.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	Պատվիրատու
«Բլիզարդ» ՍՊԸ	«Առողջապահության նախարարություն»
Գործ. հասցե՝ Վ. Սարգսյան 26/1	Հասցե՝ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն N3
ՀՎՀՀ՝ 02577644	ՀՎՀՀ՝ 02507171
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ	ՀՀ ՖՆ գանձապետական հաշվեհամար՝
Հ/Հ 1570022641230100	Հ/Հ 900011041218
Տնօրեն՝ Արմենուհի Խաչատրյան	Գլխավոր քարտուղար՝ Վարդանուշ Գրիգորյան
Կ.Տ.	Կ.Տ.